




ՄԱԿ-Ի ԿԱՅՈՒՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ (ԿԶՆ)



ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ,
ԱՐԺԵՔՆԵՐԸ,
ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր առաքելությունն է՝
պատրաստել մասնագիտական
հմտություններով և ոլորտի
շահակիցների հետ
համագործակցությամբ երկրի
ագրոպարենային համակարգը
զարգացնելու ունակ
ագրոտեխնոլոգիական
ուղղվածությամբ մասնագետներ:

Համալսարանը խթանելու է իր
գիտական ներուժը՝ առաջարկելով
առաջընթացի լավագույն
լուծումներ, ներդնելու է
արդիական տեխնոլոգիաներ՝
օգտագործելով եւ ցուցադրելով
գիտելիքահենք տնտեսության
արդյունքները

- 
- Առաքելությունը
Տեղականը
Արժեքները
Միջազգային ամբիցիաները
Ազգային առաջնահերթությունները
ԿԶՆ-երը
ԳԱՅ-երը

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Գերազանցություն	Հաշվետվողականություն և թափանցիկություն
Ձգտել և հասնել որակի բարձր նշանոցի, պրոֆեսիոնալիզմի, ապահովել շարունակական բարելավում ու խրախուսել, խթանել համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում անհատական և կոլեկտիվ ներդրումները և ձեռքբերումները:	Մշտապես կարևոր համարելով ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը, աշխատել թափանցիկ, լինել հաշվետու:
Սոցիալական պատասխանատվություն	Ուսանողակենտրոնություն
Ծառայել հանրությանը, հարստացնել նորարարական գիտելիքներով և պատրաստել ազգի և պետության հանդեպ անձնական պատասխանատվություն ստանձնելու ունակ մասնագետներ:	Ձևավորել ուսումնառողների ստեղծարարության, զարգացման համար անհրաժեշտ ուսումնական, հավասար հասանելի և համագործակցային միջավայր՝ ապահովելով նրանց ակտիվ ներգրավվածությունը:
Արժանապատիվ միջավայր յուրաքանչյուրի համար	Առաջնորդություն
Պահպանել էթիկայի նորմերը, լինել ազնիվ և արդար, երաշխավորել ակադեմիական ազատություն և ազնվություն:	Խթանել առաջնորդության հատկությունների ձևավորումը, հորդորել լինել ինքնավստահ և ինքնուրույն լուծել խնդիրներ, զինելով լավագույն փորձով և ոգեշնչելով փոխել աշխարհը դեպի լավը:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

Համալսարանի *տեսլականն* է՝ դառնալ ստեղծարարությամբ և նորարարություններով՝
առաջնորդվող ագրոտեխնոլոգիական ուսումնագիտական գերազանցության կենտրոն՝
խթանելով գյուղատնտեսական կրթության, գիտության, խորհրդատվության և արտադրության
ներդաշնակ փոխհամագործակցությունը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Միջազգային հեղինակավոր բուհերի հետ նոր համատեղ կրթական ծրագրերի իրականացում՝ շնորհելով կրկնակի կամ միասնական աստիճանի դիպլոմներ, հավաստագրեր
- Միջազգային դրամաշնորհային ծրագրերի համակարգում
- Կրթական ծրագրերի միջազգային հավատարմագրում
- Օտարերկրացի ուսանողների թվաքանակի աճի ապահովում
- Գիտության ոլորտում նորարարական լուծումների արտահանում
- Միջազգային գիտական ծրագրերին մասնակցություն

ԱԶԳԱՅԻՆ
ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՊԱՐԵՆԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ



ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ԶԱՐԳԱՅՈՒՄ



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ



ԱՆՎՏԱՆԳ ՄՆՈՒՆԴ



ԽԵԼԱՅԻ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Առաքելությունը
Տեսլականը
Արժեքները
Միջազգային հավակնությունները
Ազգային առաջնահերթությունները
ԿԶՆ-ները
ԳԱՅ-երը

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Պարենային անվտանգության հիմնական խնդիրներից են՝ սննդամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիության, բնակչության սպառման համար մատակարարվող սննդամթերքի անվտանգության ապահովումը:

ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Հայաստանում կրթական համակարգի խնդիրները բազմազան են, սակայն ամենամտահոգիչը կրթության որակի բարելավումն է, որը երկարաժամկետ առումով պայմանավորում է հասարակության բարեկեցությունը:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

ՀՀ կառավարությունն առաջիկա 5 տարիների ընթացքում առաջնորդվելով կայուն զարգացման սկզբունքով՝ կիրականացնի այնպիսի գործողություններ, որոնք կբացառեն բնական ռեսուրսների գերշահագործումը, նվազագույնի կհասցնեն շրջակա միջավայրի, այդ թվում՝ մարդու կյանքի և առողջության վրա բացասական ազդեցությունները, կապահովեն շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելումը կամ նվազեցումը, բնական ռեսուրսների համալիր կառավարումը և դրանց նկատմամբ վերահսկողությունը:

ԱՆՎՏԱՆԳ ՄՆՈՒՆԴ

ՀՀ-ում սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացման որակական փոփոխությունների ապահովումը պահանջում է սննդամթերքի անվտանգության կարողությունների և որակի ենթակառուցվածքների արդիականացման միջոցով հետևողականորեն նպաստել երկրում սննդամթերքի անվտանգության ապահովման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը:

ԽԵԼԱՅԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից համաշխարհային մարտահրավերների համատեքստում Հայաստանի համար խելացի և նորարար տնտեսություն ունենալն այլընտրանք չունի: Խելացի կառավարման հիմքում դրված է առկա միջոցներով առավելագույն արդյունքի հասնելու սկզբունքի կիրառումը: Խելացի գյուղատնտեսության զարգացման մեր տեսլականի ապահովման համար առաջնային է մարդկային ներուժի զարգացումը:

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՆՊԱՏԱԿՆԵՐ



ՍՈՎԻ ՎԵՐԱՑՈՒՄ



ԱՍՈՒՐ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ



ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ



ՄԱՔՈՒՐ ԶՈՒՐ ԵՎ
ՄԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ



ՄԱՏՉԵԼԻ ԵՎ ՄԱՔՈՒՐ
ԷՆԵՐԳԻԱ



Առաքելությունը
Տեսլականը
Արժեքները
Միջազգային հավակնությունները
Ազգային առաջնահերթությունները
ԿԶՆ-ները
ԳԱՑ-երը

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Նպատակ 2: Վերացնել սովը, հասնել պարենային ապահովության ու բարելավված սնուցման, խթանել գյուղատնտեսության հարակալուն զարգացումը

ՀԱԱՀ-ն ձգտում է նպաստել պարենարտադրության, ընտանեկան գյուղացիական տնտեսությունների, մասնավորապես կին և երիտասարդ ֆերմերների արտադրողականության բարձրացմանը և եկամուտների ավելացմանը, այդ թվում՝ հողի, այլ արտադրական ռեսուրսների և ներդրումների, գիտելիքների, ֆինանսական ծառայությունների, հավելյալ արժեքի ստեղծման և շուկաների հնարավորությունների և ոչ գյուղատնտեսական զբաղվածության ապահով և հավասար հասանելիության միջոցով: Համագործակցելով բոլոր հնարավոր շահակիցների հետ՝ համալսարանը ձգտելու է նպաստել ՀՀ սննդի անվտանգության կայուն մեխանիզմների պահպանմանը և զարգացմանը:

Նպատակ 3: Ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից

Համալսարանը միտված է նպաստելու վտանգավոր քիմիական նյութերի և օդի, ջրի և հողի աղտոտման և թունավորման հետևանքով մահերի և հիվանդությունների թվի կրճատմանը տրամադրելով որակյալ գյուղատնտեսական կրթություն, բարձրակարգ մասնագիտական խորհրդատվություն և հետազոտություններ, ինչպես նաև խթանելու առողջ գյուղատնտեսության և սննդի անվտանգության համակարգերի համար բազմապրոֆիլ հետազոտությունների ու կրթական ծրագրերի իրականացումը՝ ապահովելով անվտանգ սննդամթերքի արտադրության համար անհրաժեշտ մասնագիտական ներուժը:

Նպատակ 4. Ապահովել ներառական ու համապատասխան որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորություններ

Որակյալ կրթությունը մարդկանց կյանքի բարելավման և կայուն զարգացման հիմքն է: Ապահովել, որ ուսումնառողները ձեռք բերեն կայուն զարգացմանը նպաստելու անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, այդ թվում՝ կայուն զարգացման և ապրելակերպի, մարդու իրավունքների և գենդերային հավասարության, խաղաղության խթանման, գլոբալ քաղաքացիության և մշակութային բազմազանության գնահատման:

Նպատակ 6. Ապահովել բոլորի համար ջրի ու սանիտարական պայմանների հասանելիություն

Ջրի սպառման ամենամեծ մասնաբաժինը վերագրվում է գյուղատնտեսությանը: Հայաստանում ջրային պաշարների 86%-ը օգտագործվում է գյուղատնտեսական նպատակներով: ՀԱԱՀ-ը ձգտում է մշակել և ուսուցանել ջրամելիորատիվ համակարգերի նախագծման, շինարարության ու շահագործման, գյուղատնտեսական հողերի ոռոգման և հողաբարելավման նոր մեթոդներ, նպաստել ՀՀ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և գիտագործնական խնդիրների լուծմանը:

Նպատակ 7. Ապահովել բոլորի համար մատչելի, հուսալի, կայուն և ժամանակակից էներգիայի հասանելիություն

ՀԱԱՀ-ը իր գործունեության ընթացքում որդեգրել է էներգախնայող մոտեցում՝ խթանելով այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործումը այդպիսով նպաստելով կլիմայի փոփոխության, գյուղատնտեսական արդյունաբերության, էներգիայի հասանելիության խնդիրների լուծմանը, ձգտելով տարածել էներգախնայող մշակույթը բոլոր մակարդակներում, այդ թվում՝ որպես մոտեցում կրթական ծրագրերում և գիտահետազոտական աշխատանքներում:

ՆԱԽՈՐԴ ԷԶ



ԳԼԽԱՎՈՐ



ՀԱԶՈՐԴ ԷԶ

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ



ԿԱՅՈՒՆ ՔԱՂԱՔՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ



ՊԱՏԱՄԱՆԱՏՈՒ ՍՊԱՌՈՒՄ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ



ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԿԼԻՄԱՅԻ



ԿՅԱՆՔԸ ԶՐԻ ՏՄԿ



ԿՅԱՆՔԸ ՑԱՄԱՔՈՒՄ



Առաքելությունը

Տեսլականը

Արժեքները

Միջազգային հավակնությունները

Ազգային առաջնահերթությունները

ԿԶՆ-ները

ԳԱՑ-երը

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Նպատակ 11. Քաղաքները և բնակավայրերը դարձնել ներառական, դիմակայուն, անվտանգ և կայուն

Քաղաքային, մերձքաղաքային և գյուղական գյուղատնտեսության միջև գոյություն ունեն տնտեսական, սոցիալական և բնապահպանական կապեր, որոնք ուժեղացնում են սննդի կարգավորման հարցում ազգային և տարածաշրջանային հնարավորությունները: Ճիշտ պլանավորման դեպքում քաղաքային ֆերմերային տնտեսությունները կարող են նպաստել կլիմայի վրա մարդկային ազդեցության կրճատմանը և պարենային համակարգերի կառուցմանը:

Այս առումով ՀԱԱՀ-ը կարևոր է համարում կայուն քաղաքների հայեցակարգը և ձգտում է ապահովել համապատասխան մասնագիտական ներուժ՝ աջակցելու քաղաքային, մերձքաղաքային միջավայրում ուղղահայաց գյուղատնտեսության հիմնմանը, վարմանը ու զարգացմանը:

Նպատակ 12. Ապահովել սպառման և արտադրության կայուն մոդելներ

ՀԱԱՀ-ը իր ուսումնառողների և աշխատակիցների շրջանում տարածում է գյուղատնտեսական գործունեության օպտիմալ պլանավորման, արդյունավետության բարձրացման, ռեսուրսների խնայողական շահագործման, թափոնների վերամշակման մշակույթը: ՀԱԱՀ-ը որդեգրել է ենթակառուցվածքների բարեկարգման միջոցով ռեսուրսների պատասխանատու օգտագործման մոտեցումը:

Նպատակ 13. Ձեռնարկել կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ պայքարի անհապաղ գործողություններ

ՀԱԱՀ գիտնականներն իրենց գիտական հետազոտությունները նպատակաուղղել են երկրում էկոլոգիական վիճակի ուսումնասիրմանն ու գնահատմանը, տեխնաձին ադոտոված հողատարածքներից էկոլոգիապես անվտանգ սննդամթերքի ստացման նպատակով տեխնոլոգիաների մշակմանը, օրգանական գյուղատնտեսության վարման ուղղությամբ անհրաժեշտ փորձարկումների իրականացմանն ու բնական ու գյուղատնտեսական համակարգերի հարմարվողականության բարձրացմանը, կլիմայի գլոբալ փոփոխությամբ պայմանավորված անապատացման երևույթները մեղմելու և գյուղատնտեսական գործունեությունն առավել կայուն հունի մեջ դնելու համար:

Նպատակ 14. Ապահովել օվկիանոսների, ծովերի ու ջրային պաշարների պահպանությունը և կայուն օգտագործումը՝ հանուն կայուն զարգացման

Երկիրը կանգնած է այնպիսի խնդիրների առջև, ինչպիսիք են, օրինակ, ջրերի աղտոտումը, հողերի ճահճացումը և պոլիէթիլենային լողացող աղբի առկայությունը, ավիամերձ էկոհամակարգերի արդյունավետ և պատասխանատու շահագործումը, ձկնային պաշարների վերականգնումը: Այս և հարակից խնդիրների լուծումը հնարավորություն կտա ապահովել երկիրն անհրաժեշտ ջրային ռեսուրսներով և զարգացնել Կապույտ տնտեսությունը:

2019թ.-ին ՀԱԱՀ-ում բացվել է ջրային և հողային ռեսուրսների կառավարման տեխնոլոգիական հետազոտական կենտրոն, որի առաքելությունն է ջրային և հողային ռեսուրսների կառավարման ոլորտում մշակել և ներդնել ժամանակակից տեխնոլոգիաներ:

Համալսարանի Մենդագիտության և կենսատեխնոլոգիաների գիտահետազոտական ինստիտուտում գործում է սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիայի բաժին, առաջիկայում նախատեսվում է նաև գործարկել Bio-tech ինկուբատոր:

Նպատակ 15. Պահպանել. վերականգնել և խթանել ցամաքային էկոհամակարգերի կայուն օգտագործումը, ապահովել անտառների կայուն կառավարումը, պայքարել անապատացման դեմ, դադարեցնել և շրջադարձել հողերի վատթարացումը, կասեցնել կենսաբազմազանության կորուստը

ՀԱԱՀ-ում տեղակայված է Բույսերի գենետիկական ռեսուրսների ազգային բանկը: Շարունակվում են պահպանվող բուսական գենետիկ ռեսուրսների (ՄՎՑ-ներ, աբորիգեն սորտեր և տեսակներ) գենետիկական հետազոտությունները միջավայի գլոբալ փոփոխությունների նկատմամբ կայուն սորտերի ստացման սելեկցիայի նպատակով գործարկվել է մշակաբույսերի աճեցման աերոպոնիկ համակարգը:

ՀԱԱՀ առանձին ստորաբաժանումներ թեմատիկ հետազոտություններ են իրականացնում երկրի դեգրադացված անտառների պահպանության և վերականգնման, Երևան քաղաքի կանաչ տնկարկների դենդրոֆլորայի տեսակային կազմի ու գեղազարդության բարելավման կենսաէկոլոգիական ասպեկտների վերաբերյալ: Միաժամանակ համալսարանը ակտիվորեն մասնակցում է երկրի բնապահպանության ոլորտում իրագործվող միջոցառումներին, մատուցում է կանաչապատման ոլորտում խորհրդատվություն, անտառային ոլորտում՝ մասնագիտացված ծառայություններ: Ակտիվորեն մասնակցում է անտառվերականգնման գործընթացին: Մտեղծել է տնկարաններ:



ԿՐԹՈՒԹՅՈՒՆ



Ակադեմիական գերազանցություն, որակյալ ու մրցունակ կրթական ծրագրեր



Առաքելությունը
Տեղականը
Արժեքները
Միջազգային հավակնությունները
Ազգային առաջնահերթությունները
ԿԶՆ-երը
ԳԱՅ-երը

ԽՆԴԻՐՆԵՐ

- Կրթական ծրագրերի շարունակական կատարելագործում, միջազգայնացում, կրթության որակի բարձրացում,
- Տեղական և միջազգային աշխատաշուկայում պահանջարկված, ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետող, սոցիալական պատասխանատվությամբ, մրցունակ և որակյալ մասնագետների պատրաստում,
- Տեղական և միջազգային աշխատաշուկայում պահանջարկված մասնագիտությունների և օտարալեզու կրթական ծրագրերի ներդրմամբ՝ տեղական և օտարերկրյա դիմորդների համակարգի ընդլայնում,
- Ոչ ֆորմալ և շարունակական կրթության համակարգի կատարելագործում
- Կրթության գործընթացի կազմակերպման ուսանողակենտրոն մոտեցումների ներդրում և հետագա խորացում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում, ուսումնական պլանների օպտիմալացմամբ և կրթական ծրագրերի խոշորացմամբ՝ ուսումնառության վերջնարդյունքների համապատասխանեցում աշխատաշուկայի և ՈԱՇ պահանջներին,
- Դասավանդման գործընթացում կրթություն-գիտություն կապի ապահովման տեսական նախադրյալների ստեղծման համար պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեության խրախուսում,
- Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական, մանկավարժական և հետազոտական կարողությունների հզորացում՝ միտված որակյալ և մրցունակ կրթական ծրագրերի իրականացմանը,
- Մեկ կիսամյակ տևողությամբ վարձատրվող փորձառուցումների մոտեցման կիրառում, դուսլ կրթության ներդրում,
- Գիտական և տեխնոլոգիական նորարարություններին համահունչ մասնագիտական առարկաների ձևակերպման ապահովում,
- Համալսարանի կրթական ծառայություններում համագործակցության ձևաչափի ընդլայնում՝ մասնավորապես ներդնելով համատեղ, կրկնակի աստիճանաշնորհման ծրագրեր,
- Կրթական ծրագրերի հավատարմագրում, այդ թվում՝ միջազգային հավատարմագրման ճանաչված գործակալությունների կողմից,
- Գյուղատնտեսության և ագրոպարենային ոլորտի պահանջներին համահունչ ոչ ֆորմալ և շարունակական կրթության կրթական ծրագրերի մշակում և իրականացում,
- Գնահատման արժանահավատ, վերջնարդյունքահեն և ուսանողակենտրոն համակարգի ապահովում,
- Դասավանդման և ուսումնառության գործընթացում ուսանողակենտրոն, ներառական և խելացի կրթության մոտեցումների ակտիվ կիրառում, մասնավորապես STEM առարկաների կրթական ծրագրերում

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԱՅ-եր

1

Տեղական և միջազգային աշխատաշուկայում պահանջարկված ու հավատարմագրված կրթական ծրագրեր

- Իրենց մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների քանակ, միջին աշխատավարձի չափ
- Վճարվող փորձառուցումների կազմակերպման նպատակով կնքված պայմանագրերի քանակ
- Դիմորդների քանակի աճ,
- Հավատարմագրված կրթական ծրագրերի քանակ

2

Օտարալեզու կրթական ծրագրեր

- Ուսանողների, դասախոսների և վարչական աշխատակիցների շրջանում ներգնա և արտագնա շարժունության աճ
- Օտար լեզուների տիրապետող ուսանողների և դասախոսների թվաքանակի աճ
- Օտարալեզու կրթական ծրագրերի և օտարերկրյա դիմորդների քանակի աճ,

3

Կարճաժամկետ և միջնաժամկետ դասընթացների քանակ, ամառային դպրոցների քանակ



ԳԻՏՈՒԹՅՈՒՆ



Ագրոպարենային ոլորտում
գիտական և
հետազոտական
արդյունքների ստացում և
ներդրում հետազոտական
գերազանցության և
նորարարական
համակարգի զարգացմամբ



Առաքելությունը
Տեսլականը
Արժեքները
Միջազգային հավակնությունները
Ազգային առաջնահերթությունները
ԿԶՆ-երը
ԳԱՅ-երը

ԽՆԴԻՐՆԵՐ

- Հիմնադրամի գիտահետազոտական միավորների լավարկում և դրանց միջև համատեղ գիտական հետազոտության և համագործակցության խթանում, բազային տնտեսությունների գործունեության արմատական վերանայում, մարդկային և հաստատութենական կարողությունների հզորացում,
- Կրթություն-գիտություն-արտադրություն շղթայի ամրապնդում, արդյունքների ներդրում և ապրանքայնացում
- Ոլորտի մարտահրավերներին և միտումներին համահունչ գիտահետազոտական գործունեության ուղղությունների վերանայում, Համալսարանում հետազոտական առաջնահերթությունների սահմանում, կիրառական և ներդրումային նշանակություն ունեցող գիտական ծրագրերի իրականացում
- Գիտահետազոտական գործունեության տեսանկյունից բարձրացում, միջազգայնացում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Գիտահետազոտական միավորների և բազային տնտեսությունների կառուցվածքները և գործունեությունը կարգավորող փաստաթղթերի վերանայում,
- Գիտահետազոտական միավորների կողմից համատեղ ծրագրերի մշակում, իրականացում և ներդրում,
- Գիտահետազոտական միավորներում ուսանողների ներգրավվածությունը և գիտական ծրագրերում մասնակցությունը ապահովող մեխանիզմների մշակում և կիրարկում,
- Գիտական կենտրոնների մարդկային կապիտալի զարգացում, երիտասարդ կադրերի ներգրավում,
- Տեխնիկական բազայի համալրում ու արդիականացում,
- Համալսարանի կազմում գիտական արդյունքների ներդրման հաստատութենականացված մեխանիզմների գործարկում՝ գիտական արդյունքի գաղափարից մինչև դրա իրականացում,
- Կայուն զարգացման նպատակներին, երկրի գերակայություններին, ֆերմերների և ներդրողների կարիքներին համահունչ սահմանել Համալսարանի գիտահետազոտական գործունեության գերակա ուղղությունները,
- Գիտական արդյունքների հաշվառում, հղման բարձր գործակից ունեցող ամսագրերում հոդվածների հրատարակում,
- Միջազգային գիտական ծրագրերի միտումների վերհանում, համալսարանի համար ռազմավարական նշանակություն ունեցող ծրագրերի ուղղությամբ դրամաշնորհների ներկայացում,
- ՀԱԱՀ «Ագրոգիտություն և տեխնոլոգիա» պարբերականի կատարելագործում և միջազգային ճանաչված գիտական հրատարակությունների ցանկերում դիրքավորում

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ-եր

4

Կայուն զարգացման նպատակների իրականացմանը և ազգային առաջնահերթությունների հիմնախնդիրների լուծմանն ուղղված գիտական գործունեություն, միջազգայնացում.

- Միջազգային գիտակրթական կառույցների հետ արդյունավետ համագործակցություն. համատեղ իրականացրած ծրագրերի թիվ, համատեղ տպագրված հոդվածների թիվ, վերապատրաստումների թիվ,
- Միջազգային գիտաժողովների մասնակցության թիվ
- Հղման բարձր գործակից ունեցող ամսագրերում հոդվածների թվաքանակի աճ
- Գիտական դրամաշնորհների թվի աճ (միջազգային և տեղական)
- Գիտահետազոտական աշխատանքների իրականացմանն ուղղված ֆինանսական հոսքերի ծավալ

5

Կայուն սերնդափոխություն, գիտության երիտասարդացում.


- Հետազոտական գործընթացներում ներգրավված ուսանողների թվի աճ,
- երիտասարդ գիտնականների թվի աճ,
- կենտրոնների գիտաշխատողների միջին տարիք

6

Ներդրված, առևտրայնացված, արտահանված և ուսումնական գործընթացներում կիրառելի գիտական արդյունքների քանակ



ՖԻՆԱՆՍՆԵՐ



Համալսարանի ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարում



Առաքելությունը
Տեղականը
Արժեքները
Միջազգային հավակնությունները
Ազգային առաջնահերթությունները
ԿԶՆ-երը
ԳԱՅ-երը

ԽՆԴԻՐՆԵՐ

- Ֆինանսական կայունություն ու ինքնավարություն ապահովող գործուն մեխանիզմների ներդրում,
- Ռեսուրսախնայող տեխնոլոգիաների ներդրում, ծախսերի խնայողության ապահովում,
- Ֆինանսական հոսքերի ապահովում բուհի ակտիվների արդյունավետ կառավարման միջոցով,
- Այլընտրանքային ֆինանսավորման ծավալների ավելացում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ֆինանսական ռեսուրսների վերլուծություն, պլանավորում,
- Հանրակացարանի և հանգստյան տան գրավչության և մրցունակության բարձրացման միջոցով ինքնաֆինանսավորման ապահովում, լրացուցիչ եկամտի ստացում,
- Գիտահետազոտական արդյունքների առևտրայնացման միջոցով հետազոտական ծրագրերի ինքնաֆինանսավորման ապահովում,
- Ենթակառույցների բարելավման ընթացքում կիրառել տեխնիկական լուծումներ, որոնք կապահովեն հետագայում ֆինանսական միջոցների խնայողություն,
- Խորհրդատվական, տեղեկատվական, ուսուցողական և լաբորատոր ծառայությունների մատուցմամբ, վճարովի դասընթացների ներդրման միջոցով ֆինանսական ներհոսքի ապահովում,
- Ուսումնափորձական և արտադրական տնտեսությունների առողջացում, վերափոխում շահութաբեր տնտեսությունների,
- Ավանդաշնորհային (endowment) ֆոնդերի ստեղծում,
- Տեղական և միջազգային ծրագրերին մասնակցություն, դրամաշնորհային միջոցների ու նվիրատվությունների ներգրավում,
- Ներդրումների գործելակերպի կիրառում,
- Մարքեթինգի և զարգացման բաժնի կարողությունների հզորացում,

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԳԱՅ-եր

7

Այլընտրանքային ֆինանսական հոսքեր

- Ավանդաշնորհային (endowment) ֆոնդեր,
- Տեղական և միջազգային դրամաշնորհների քանակ, ֆինանսական հոսքի ծավալ,
- Նվիրատվությունների ծավալ

9

Խորհրդատվական, տեղեկատվական, ուսուցողական և լաբորատոր ծառայությունների դիմաց ֆինանսական ներհոսքի ծավալ

8

Ուսումնափորձական և արտադրական տնտեսությունների եկամուտների ծավալ

10

Ներդրված, առևտրայնացված, արտահանված գիտական արդյունքներից ստացված ֆինանսական ներհոսքի ծավալ

ՆԱԽՈՐԴ ԷԶ



ԳԼԽԱՎՈՐ



ՀԱԶՈՐԴ ԷԶ

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ



Համալսարանի
կառավարչական
համակարգում ուղղահայաց
և հորիզոնական
համագործակցության,
մասնակցության,
հաշվետվողականության և
թափանցիկության
ապահովում



Առաքելությունը
Տեսլականը
Արժեքները
Միջազգային հավակնությունները
Ազգային առաջնահերթությունները
ԿԶՆ-երը
ԳԱՑ-երը

ԽՆԴԻՐՆԵՐ

- Ներկազմակերպական և ակադեմիական մշակույթի ձևավորում,
- Համալսարանի կառավարման համակարգի բարեփոխում և արդյունավետության բարձրացում,
- Մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) նոր համակարգի ներդրում, լավագույն կադրերի ներգրավում, պահպանում և զարգացում,
- Որակի ապահովման համակարգի վերանայում, պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում (ՊԻԳԲ) շրջափուլի կիրարկում և ազդեցությանն ուղղված մշտադիտարկման ու գնահատման համակարգի ներդրում,
- Կառուցվածքային ստորաբաժանումների կոմպեկտնեցման և մրցունակության բարձրացում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ընդհանուր արժեքային համակարգի ձևավորում և բարեվարքության կանոնների տարածում,
- Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) բարձրացում,
- Ձևավորել հաշվետվողականության և թափանցիկության հստակ մեխանիզմներ,
- Կառավարման ավտոմատացված համակարգերի ներդրում,
- Փոխգործակցության քարտեզավորում (ՄՈՒՀ-ի բոլոր ստորաբաժանումների և մասնաճյուղերի միջև տեղեկատվության տարածման, գործընթացի վերահսկման, համագործակցության և վերջիններիս կառավարման մեխանիզմների հստակեցում),
- Ներքին իրավական ակտերի համահունչության ապահովում միջազգային և ազգային իրավական ակտերի հետ,
- Մշակել, ներդնել համալսարանի աշխատողների վերապատրաստման և աստեղծարարական համակարգեր ըստ տարակարգերի,
- Մշակել և զարգացնել դասախոսների, վարչական և ուսումնաօժանդակ աշխատողների տարբերակված հավելավճարի չափանիշներ և հավելավճարի մեխանիզմներ,
- Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմները, խրախուսել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը,
- Դիտարկել սոցիալական և/կամ բժշկական ապահովության փաթեթներ ներդնելու հնարավորությունները ,
- Համալսարանի գործունեության վերլուծության և արդյունավետ պլանավորման համար անհրաժեշտ տվյալների շտեմարանի ստեղծում,
- Որակի ապահովման համակարգի վերանայում,
- Համալսարանի ստորաբաժանումների կազմակերպական կառավարչական կարողությունների հզորացում,
- Զարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները, խթանել ուսանողական կազմակերպությունների աշխատանքները,
- Խթանել ուսանողների կարիերայի ծառայությունները՝ զարգացնելով դուալ կրթությունը, խորհրդատվության և ուսուցողական դասընթացների համակարգը,
- Ռեսուրսների համատեղ օգտագործման նպատակով առցանց հարթակի ձևավորում

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳԱՑ-եր

11

Կառավարման ավտոմատացվածության և թվայնացվածության աստիճան

12

Մարդկային ռեսուրսների կառավարում և կայուն սերնդափոխություն

- ուսանող-ՊԴԱ կազմ, ուսանող-վարչական կազմ, ուսանող-ուսումնաօժանդակ կազմ ու դասախոսական կազմ-ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցություն
- դոկտորների և թեկնածուների թիվ
- աշխատակիցների բավարարվածության մակարդակ
- ՊԴԱ միջին տարիք

13

Աշխատակիցների բարեկեցություն

Սոցիալական ծրագրերի առկայություն, միջին աշխատավարձերի աճ

ՆԱԽՈՐԴ ԷԶ



ԳԼԽԱՎՈՐ



ՀԱԶՈՐԴ ԷԶ



Ազգային և միջազգային մակարդակներում գյուղատնտեսական և հարակից ոլորտների էկոհամակարգերի հետ անընդհատ համագործակցության պայմաններում համալսարանի շարունակական զարգացում



Առաքելությունը
Տեսլականը
Արժեքները
Միջազգային հավակնությունները
Ազգային առաջնահերթությունները
ԿԶՆ-երը
ԳԱՑ-երը

ԽՆԴԻՐՆԵՐ

- Ոլորտի պետական, մասնավոր, ՀԿ և միջազգային ոլորտի շահագրգիռ կողմերի հետ արդյունավետ փոխհամագործակցության մեխանիզմների ապահովում,
- Հասարակությանը ծառայության մատուցում՝ շարունակական կրթության ծրագրերի և խորհրդատվական ծառայությունների տրամադրման միջոցով,
- Համալսարանի վերաբրենդավորում և դիրքավորում գյուղատնտեսական ու հարակից ոլորտների էկոհամակարգերում որպես ագրոտեխնոլոգիական ուսումնագիտական գերազանցության կենտրոն,
- Կրթության, ագրարային և հարակից ոլորտներում օրենսդրական դաշտի զարգացման խթանում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Շահագրգիռ կողմերի հետ գործակցային ցանցի և հարթակների ձևավորում, կարևորելով Միյոուքի հետ կանոնավոր աշխատանքը,
- Քաղաքականությունների, միջոցառումների համատեղ մշակում, իրականացման աջակցություն,
- Համալսարանի հաղորդակցության մեխանիզմների և կարողությունների զարգացում,
- Գործուն կապի ձևավորում ոլորտի գործատուների հետ,
- Համալսարանի ռեսուրսներն ու կարողությունները ներկայացնել b2b հարթակներում՝ այդ կերպ ապահովելով արտադրական գործընթացներին համալսարանի մասնակցությունը,
- Ձևավորել շարունակական կրթության միասնական համակարգ՝ ապահովելով հանրային պահանջարկի և համալսարանական առաջարկի միջև փոխկապակցվածությունը,
- Գյուղատնտեսական և հարակից այլ ոլորտներում համալսարանի կրթական և գիտական ներուժի ներդրում՝ որպես արտաքին շահակիցների կողմից օգտագործելի ռեսուրսներ,
- Ագրոտեխնոլոգիական կրթության վերաբերյալ հանրության շրջանում իրազեկվածության բարձրացում,
- Ստարտափների (ագրոտեխնոլոգիական և բիոտեխնոլոգիական) զարգացում,
- Համագործակցություն տեղական և միջազգային բուհերի հետ ,
- ՀԱԱՀ գործունեությանը առնչվող ոլորտներում իրավական բարեփոխումների առաջարկների և օրենսդրական նախաձեռնությունների մշակում և առաջադրում,

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՑ-եր

- 14
- Համագործակցության աշխարհագրություն
- Բուհի համատեղ իրականացվող ծրագրերի (այդ թվում նաև փոխանակման ծրագրերի) քանակ ըստ երկրների և բուհերի,
 - Գիտական գործունեության շրջանակներում գործունեություն իրականացնող գիտական կենտրոնների և գիտնականների քանակ ըստ երկրների,
 - Նվիրատվություն և ֆինանսական աջակցություն տրամադրած անձնք ըստ երկրների, շահած դրամաշնորհներ ըստ երկրների,
 - Օտարերկրացի դիմորդներ ըստ երկրների

- 15
- Պետական կառավարման մարմիններին և հասարակությանը մատուցված ծառայություններ
- ՀԱԱՀ ստորաբաժանումների կողմից գյուղատնտեսությունում, գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերությունում, գյուղատնտեսությանը սպասարկող ոլորտներում տնտեսավարողներին մատուցված ծառայությունների ծավալ
 - Պետական կառավարման մարմիններին մատուցված խորհրդատվության ծավալ, օրենսդրական բացերի վերաբերյալ մշակված առաջարկների փաթեթների քանակ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ



Համալսարանի առաքելությանը, տեսլականին և նպատակներին համապատասխան մարդկային ռեսուրսների և ենթակառուցվածքների ապահովում



Առաքելությունը
Տեսլականը
Արժեքները
Միջազգային հավակնությունները
Ազգային առաջնահերթությունները
ԿԶՆ-երը
ԳԱՑ-երը

ԽՆԴԻՐՆԵՐ

- Համալսարանի ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի արդիականացում, մասնաշենքերի վերանորոգում, ֆիզիկական մատչելիության և անվտանգ միջավայրի ապահովում,
- Համալսարանի կարիքներին համապատասխան մարդկային ռեսուրսների ապահովում,
- Համալսարանում խելացի կրթության միջավայրի պայմանների ապահովում,
- Թանգարանային համալիրի ձևավորում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Գույքագրել, տեսակավորել ու դասակարգել առկա ռեսուրսները,
- Իրականացնել ուսումնական մասնաշենքերի վերանորոգման աշխատանքներ՝ զուգահեռաբար ապահովելով հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար հարմարեցված պայմաններ,
- Ընդլայնել և բարեկարգել հանրակացարանային բազան և հանգստյան տունը,
- Զարգացնել ուսումնական մասնաշենքերի անվտանգության համակարգերը և ապահովել անվտանգ միջավայր,
- Բուհի որդեգրած նոր առաքելությանը, տեսլականին և ՌՊ նպատակներին համապատասխան անձնակազմ,
- Վերանորոգել և տեխնոլոգիապես վերազինել ու արդիականացնել գիտական և ուսումնական լաբորատորիաները, լսարանները՝ շեշտադրելով IOT, STEM ուղղությունները,
- Մշակութային արժեքների պահպանման պատշաճ պայմանների ապահովում և հանրայնացում

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԳԱՑ-եր

16

Անձնակազմի մասնագիտական առաջընթացի ապահովում.

- Վերապատրաստված աշխատակիցների քանակ
- Մարդկային կապիտալի զարգացման նպատակով իրականացված ֆինանսական ներդրումների ծավալ

17

Ժամանակակից կրթության պահանջներին համապատասխանող և բուհի որդեգրած նոր առաքելությանը, տեսլականին և ՌՊ նպատակներին համապատասխան շարունակաբար համալրվող ենթակառուցվածքներ, ռեսուրսներ և ուսումնական լաբորատորիաներ.

- Համալսարանի վերակառուցված և վերանորոգված մասնաշենքերի տարածքների մակերես, քանակ, իրականացրած ֆինանսական ներդրումների ծավալ
- Ժամանակակից սարքավորումներով վերազինված ու կահավորված ուսումնական, գիտահետազոտական լաբորատորիաների քանակ, իրականացրած ներդրումների ծավալ, տեխնիկական միջոցներով հագեցած լսարանների քանակ,

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ 1-ԻՑ 6 ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ցանկանալով գնահատել մեր
զարգացման առաջընթացը և մեր
ներդրումն ազգային
առաջնահերթությունների
իրականացման գործընթացում՝
սահմանվել են գործունեության

առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ-եր):



Առաքելությունը
Տեսլականը
Արժեքները
Միջազգային հավակնությունները
Ազգային առաջնահերթությունները
ԿԶՆ-երը
7-ից 17 ԳԱՑ-երը

ԱՊԱՀՈՎԵԼ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԲՐԵՆԴԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՆՑՈՒՄ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԵՎ ԳՐԱՐԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

*ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՅՈՒՄ. ուսանողականություն, խելացի
կրթական միջավայրում ձևավորել տեղական և միջազգային
աշխատաշուկայում պահանջարկված մրցունակ և բարձրորակ
մասնագետներ*

- 1 Տեղական և միջազգային աշխատաշուկայում
պահանջարկված ու հավատարմագրված կրթական
ծրագրեր
- Իրենց մասնագիտությամբ աշխատող
շրջանավարտների քանակ, միջին աշխատավարձի չափ
 - Վճարվող փորձուսուցումների կազմակերպման
նպատակով կնքված պայմանագրերի քանակ
 - Դիմորդների քանակի աճ,
 - Հավատարմագրված կրթական ծրագրերի քանակ

- 2 Օտարալեզու կրթական ծրագրեր
- Ուսանողների, դասախոսների և վարչական
աշխատակիցների ներգնա և արտագնա շարժունության
աճ
 - Օտար լեզուների տիրապետող ուսանողների և
դասախոսների թվաքանակի աճ
 - Օտարալեզու կրթական ծրագրերի և օտարերկրյա
դիմորդների քանակի աճ,

- 3 Կարճաժամկետ և միջնաժամկետ դասընթացների քանակ,
ամառային դպրոցների քանակ

*ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՅՈՒՄ. ամրապնդել համալսարանի՝
տեսական և կիրառական հետազոտություններ իրականացնելուն
միտված գիտահետազոտական կենտրոնների փոխգործակցությունը*

- 4 Կայուն զարգացման նպատակների իրականացմանը և
ազգային առաջնահերթությունների հիմնախնդիրների
լուծմանն ուղղված գիտական գործունեություն,
միջազգայնացում.
- Միջազգային գիտակրթական կառույցների հետ
արդյունավետ համագործակցություն. համատեղ
իրականացրած ծրագրերի թիվ, համատեղ տպագրված
հոդվածների թիվ, վերապատրաստումների թիվ,
 - Միջազգային գիտաժողովների մասնակցության թիվ
 - Հղման բարձր գործակից ունեցող ամսագրերում
հոդվածների թվաքանակի աճ
 - Գիտական դրամաշնորհների թվի աճ (միջազգային և
տեղական)
 - Գիտահետազոտական աշխատանքների
իրականացմանն ուղղված ֆինանսական հոսքերի
ծավալ

- 5 Կայուն սերնդափոխություն, գիտության երիտասարդացում.
- Հետազոտական գործընթացներում ներգրավված
ուսանողների թվի աճ,
 - Երիտասարդ գիտնականների թվի աճ,
 - կենտրոնների գիտաշխատողների միջին տարիք

- 6 Ներդրված, առևտրայնացված, արտահանված և
ուսումնական գործընթացներում կիրառելի գիտական
արդյունքների քանակ



ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՑՔԱՅԻՆ 7-ԻՑ 17
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ



Առաքելությունը
Տեսլականը
Արժեքները
Միջազգային հավակնությունները
Ազգային առաջնահերթությունները
ԿԶՆ-երը
1-ից 7 ԳԱՑ-երը

ԱՊԱՀՈՎԵԼ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԲՐԵՆԴԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՆՑՈՒՄ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԵՎ ԱԳՐՈՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

Ֆինանսական ինքնավարություն

- 7

Այլընտրանքային ֆինանսական հոսքեր

 - Ավանդաշնորհային (endowment) ֆոնդեր, ֆինանսական ներհոսք,
 - Տեղական և միջազգային դրամաշնորհների քանակ, ֆինանսական հոսքի ծավալ,
 - Նվիրատվությունների ծավալ
- 8

Ուսումնափորձնական և արտադրական տնտեսությունների եկամուտների ծավալ
- 9

Խորհրդատվական, տեղեկատվական, ուսուցողական և լաբորատոր ծառայությունների դիմաց ֆինանսական ներհոսքի ծավալ
- 10

Ներդրված, առևտրայնացված, արտահանված գիտական արդյունքներից ստացված ֆինանսական ներհոսքի ծավալ

Ձևավորել տնտեսական և սոցիալական արժեքներ՝ դրանք ուղղորդելով ոլորտում նորարարությունների ներդրմանը և հասարակության հետ երկխոսության ուժեղացմանը

- 11

Կառավարման ավտոմատացվածության և թվայնացվածության աստիճան
- 12

Մարդկային ռեսուրսների կառավարում և կայուն սերնդափոխություն

 - ուսանող-ՊԴԱ կազմ, ուսանող-վարչական կազմ, ուսանող-ուսումնաօժանդակ կազմ ու դասախոսական կազմ-ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցություն
 - դոկտորների և թեկնածուների թիվ
 - աշխատակիցների բավարարվածության մակարդակ
 - ՊԴԱ միջին տարիք
- 13

Աշխատակիցների բարեկեցություն
Սոցիալական ծրագրերի առկայություն, միջին աշխատավարձերի աճ
- 14

Համագործակցության աշխարհագրություն

 - Բուհի համատեղ իրականացվող ծրագրերի (այդ թվում նաև փոխանակման ծրագրերի) քանակ ըստ երկրների և բուհերի,
 - Գիտական գործունեության շրջանակներում գործունեություն իրականացնող գիտական կենտրոնների և գիտնականների քանակ ըստ երկրների,
 - Նվիրատվություն և ֆինանսական աջակցություն տրամադրած անձնք ըստ երկրների, շահած դրամաշնորհներ ըստ երկրների,
 - Օտարերկրացի դիմորդներ ըստ երկրների
- 15

Պետական կառավարման մարմիններին և հասարակությանը մատուցված ծառայություններ

 - ՀԱԱՀ ստորաբաժանումների կողմից գյուղատնտեսությունում, գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերությունում, գյուղատնտեսությանը սպասարկող ոլորտներում տնտեսավարողներին մատուցված ծառայությունների ծավալ
 - Պետական կառավարման մարմիններին մատուցված խորհրդատվության ծավալ, օրենսդրական բացերի վերաբերյալ մշակված առաջարկների փաթեթների քանակ
- 16

Անձնակազմի մասնագիտական առաջընթացի ապահովում .

 - Վերապատրաստված աշխատակիցների քանակ
 - Մարդկային կապիտալի զարգացման նպատակով իրականացված ֆինանսական ներդրումների ծավալ
- 17

Ժամանակակից կրթության պահանջներին համապատասխանող և բուհի որդեգրած նոր առաքելությանը, տեսլականին և ՌՊ նպատակներին համապատասխան շարունակաբար համալրվող ենթակառույցներ, ռեսուրսներ և ուսումնական լաբորատորիաներ .

 - Համալսարանի վերակառուցված և վերանորոգված մասնաշենքերի տարածքների մակերես, քանակ, իրականացրած ֆինանսական ներդրումների ծավալ
 - Ժամանակակից սարքավորումներով վերազինված ու կահավորված ուսումնական, գիտահետազոտական լաբորատորիաների քանակ, իրականացրած ներդրումների ծավալ, տեխնիկական միջոցներով հագեցած լսարանների քանակ,

